ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 1205-Ա

ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-ի N12-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 50 ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱՔԱՆԴ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՄՈ ՎԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Պետրովի փողոց, 2-րդ նրբանցք թիվ 50 հասցեում գտնվող կիսաքանդ անասնագոմի սեփականատեր Կամո Վանիկի Սարգսյանի /ծնված 18.04.1963թ./ դիմումը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, որի համաձայն քաղաք Գավառ Պետրովի փողոց, 2-րդ նրբանցք թիվ 50 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է /ծածկագիր 05-001-0334-0008/, մակերեսը փաստացի կազմում է 0.22595հա, ինչպես նաև հաշվի առնելով, որ փաստացի օգտագործվող 0.22595հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, որոշում եմ

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառի քաղաքապետի 2017 թվականի փետրվարի 01-ի թիվ 12-Ա որոշումը
2. Վերականգնել Գավառ քաղաքի Պետրովի փողոց, 2-րդ նրբանցք թիվ 50 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Կամո Վանիկի Սարգսյանի /ծնված 18.04.1963թ./ հողօգտագործման իրավունքը կիսաքանդ անասնագոմի կառուցման և սպասարկման համար հատկացված 0.22595հա մակերեսով հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.22595հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ համաձայն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի տրամադրել անհատույց սեփականության իրավունք, հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա

հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք Պետրովի փողոց 2-րդ նրբանցք թիվ 50 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20 __ թ. _____ ____

ք.Գավառ